

Հրապարակված է 14/01/2022թ.
 Ամփոփագրում նշված պայմանները
 կարող են փոփոխված լինել:
 Հեռ. (+374 10) 510 510, www.incobank.am

**ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՍՓՈՓԱԳԻՐ
 (\$ֆիզիկական անձանց համար)**

Տարեկան անվանական տոկոսադրույք								
<i>(InecoOnline/InecoMobile համակարգերով ձևակերպվող և տոկոսագումարները ժամկետի ավարտին վճարմամբ ավանդների համար)</i>								
Ժամկետ /ամիս/	1-2	3-5	6-8	9-11	12-14	15-23	24-30	31-36
ՅՅ դրամ								
Ավանդ «Պարզ»	4.00%	6.00%	7.50%	8.00%	9.00%	9.25%	9.50%	9.50%
Ավանդ «Համալրվող»	-	-	-	7.75%	8.50%	9.15%	9.40%	9.40%
Ավանդ «Ճկուն»	-	-	6.5%	6.5%	8.00%	8.00%	8.35%	8.35%
Ժամկետ /ամիս/	1-2	3-5	6-8	9-11	12-14	15-23	24-30	31-36
ԱՄՆ դոլար								
Ավանդ «Պարզ»	0.5%	1.50%	2.50%	2.80%	3.15%	3.15%	3.15%	3.40%
Ավանդ «Համալրվող»	-	-	-	2.45%	2.70%	3.00%	3.00%	3.25%
Ավանդ «Ճկուն»	-	-	2.00%	2.30%	2.40%	2.40%	2.40%	2.65%
Ժամկետ /ամիս/	1-2	3-5	6-8	9-11	12-14	15-24	-	-
Եվրո								
Ավանդ «Պարզ»	-	0.30%	0.75%	1.00%	1.50%	1.50%		
Ավանդ «Համալրվող»	-	-	-	-	-	-		
Ավանդ «Ճկուն»	-	-	0.25%	0.50%	1.00%	1.25%		
Ժամկետ /ամիս/	1-2	3-5	6-8	9-11	12-14	15-24	-	-
Ռուբլի								
Ավանդ «Պարզ»	0.50%	3.00%	3.50%	4.00%	4.50%	4.50%		
Ավանդ «Համալրվող»	-	-	-	-	-	-		
Ավանդ «Ճկուն»	-	-	2.50%	3.00%	3.50%	3.50%		

Տարեկան տոկոսային եկամտաբերություն

(InecoOnline/InecoMobile համակարգերով ձևակերպվող և տոկոսագումարները ժամկետի ավարտին վճարմամբ ավանդների համար)

Ժամկետ /ամիս/	1-2	3-5	6-8	9-11	12-14	15-23	24-30	31-36
ՀՀ դրամ								
Ավանդ «Պարզ»	4.00%	6.00%	7.50%	8.00%	9.00%	9.25%	9.50%	9.50%
Ավանդ «Համալրվող»	-	-	-	7.75%	8.50%	9.15%	9.40%	9.40%
Ավանդ «Ճկուն»	-	-	6.5%	6.5%	7.90%	8.00%	8.35%	8.35%
Ժամկետ /ամիս/	1-2	3-5	6-8	9-11	12-14	15-23	24-30	31-36
ԱՄՆ դոլար								
Ավանդ «Պարզ»	0.5%	1.50%	2.50%	2.80%	3.15%	3.15%	3.15%	3.40%
Ավանդ «Համալրվող»	-	-	-	2.45%	2.70%	3.00%	3.00%	3.25%
Ավանդ «Ճկուն»	-	-	2.00%	2.30%	2.40%	2.40%	2.40%	2.65%
Ժամկետ /ամիս/	1-2	3-5	6-8	9-11	12-14	15-24	-	-
Եվրո								
Ավանդ «Պարզ»	-	0.30%	0.75%	1.00%	1.50%	1.50%		
Ավանդ «Համալրվող»	-	-	-	-	-	-		
Ավանդ «Ճկուն»	-	-	0.25%	0.50%	1.00%	1.25%		
Ժամկետ /ամիս/	1-2	3-5	6-8	9-11	12-14	15-24	-	-
Ռուբլի								
Ավանդ «Պարզ»	0.50%	3.00%	3.50%	4.00%	4.50%	4.50%		
Ավանդ «Համալրվող»	-	-	-	-	-	-		
Ավանդ «Ճկուն»	-	-	2.50%	3.00%	3.50%	3.50%		

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ` ԲԱՆԿԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐՈՒՄ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՈՒՄ ՆԵՐԴՐՎԱԾ ԵՎ/ՎԱՄ ՏՈԿՈՍՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԱՅԼ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ՆԵՐԴՐՎԱԾ ԱՎԱՆԴՆԵՐԻ ԴԵՊՅՈՒՄ ԱՎԱՆԴԻ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵՎԱՍՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ՏԱՐԲԵՐՎԵԼ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ` ՁԵՐ ՀԱԾԿՈՒՄ ԱՌԿԱ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱԾԿԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵՎԱՍՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԵՎԱՄՈՒՏ ԿՍՏԱՆԱՔ ԴՈՒՔ` ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ԱՎԱՆԴԻ ՀԵՏ ԿԱՊԿԱԾ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՍԱՅՄԱՆՎԱԾ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ՎԱՍՏԱԿԱԾ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ:

ԱՎԱՆԴԻ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵՎԱՍՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԻ ՀԱԾՎԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ Է ԸՆԴՈՒՄԿՈՒՄ ՀՀ ԿԲ «ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵՎԱՍՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱԾՎԱՐԿՈՒՄԸ» ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 8/02-ՈՎ ՍԱՅՄԱՆՎԱԾ ԲԱՆԱԶԵՎԸ:

Բանկի մասնաճյուղերում և Կենտրոնական գրասենյակում՝

- ՀՀ դրամով ավանդների ներդրման դեպքում կիրառվում է սահմանված տոկոսադրույքից 0.25 նիշով ցածր սակագին մեկ տարի և ավել ժամկետով ներդրվող ավանդների համար:
- ԱՄՆ դոլարով ավանդների ներդրման դեպքում կիրառվում է սահմանված տոկոսադրույքից 0.15 նիշով ցածր սակագին մեկ տարի և ավել ժամկետով ներդրվող ավանդների համար:
- Եվրո/Ռուբլի արժույթով ավանդների ներդրման դեպքում կիրառվում է հեռակառավարման համակարգերով ձևակերպվող համապատասխան արժույթով ավանդների համար սահմանված տոկոսադրույքը:

Տոկոսների վճարման պարբերականություն

- 3 ամիս և ավել ժամկետով ավանդ ներդնելու դեպքում տոկոսագումարները կարող են վճարվել ամսական՝ համապատասխան սանդղակից 0.5 նիշով պակաս տոկոսադրույքով:
- 15 ամիս և ավել ժամկետով ավանդ ներդնելու դեպքում տոկոսագումարները կարող են վճարվել տարեկան՝ համապատասխան սանդղակից 0.25 նիշով պակաս տոկոսադրույքով:
- Վճարված տոկոսագումարները չեն կապիտալացվում:

Ավանդի համալրում

- **«Համալրվող»** ավանդը կարող է համալրվել ավանդի գործողության ժամկետի մեկ երրորդի ընթացքում՝ համաձայն ստորև ներկայացված աղյուսակի:

Ավանդի ժամկետ	Համալրման հնարավորությամբ ամիսների քանակ
9 ամիս	առաջին 3 ամիսների ընթացքում
10-12 ամիս	առաջին 4 ամիսների ընթացքում
13-15 ամիս	առաջին 5 ամիսների ընթացքում
16-18 ամիս	առաջին 6 ամիսների ընթացքում
19-21 ամիս	առաջին 7 ամիսների ընթացքում
22-24 ամիս	առաջին 8 ամիսների ընթացքում
25-27 ամիս	առաջին 9 ամիսների ընթացքում
28-30 ամիս	առաջին 10 ամիսների ընթացքում
31-33 ամիս	առաջին 11 ամիսների ընթացքում
34-36 ամիս	առաջին 12 ամիսների ընթացքում

- **«Պարզ»** և **«ճկուն»** ավանդատեսակները չունեն համալրելու հնարավորություն:

Ավանդի պակասեցում/ խզում

- **«Պարզ»** և **«Համալրվող»** ավանդատեսակների դեպքում ավանդի գումարը պայմանագրային ժամկետից շուտ ետ պահանջելու դեպքում տոկոսագումարի նկատմամբ կկատարվի վերահաշվարկ՝ տվյալ պահին Բանկում «Ցպահանջ» ավանդի համար սահմանված տարեկան տոկոսադրույքով:
- **«ճկուն»** ավանդի գումարը պայմանագրային ժամկետից շուտ մասնակի կամ ամբողջությամբ ետ պահանջելու դեպքում մնացորդի նկատմամբ կշարունակի հաշվարկվել պայմանագրով սահմանված տոկոսադրույքը, իսկ խզվող/մասնակի ելքագրվող գումարի նկատմամբ կկատարվի տոկոսագումարի վերահաշվարկ ստորև ներկայացված սանդղակով՝

Խզման ամիս**	Վերահաշվարկի տոկոսադրույք
Մինչև 3 ամիս	տվյալ պահին Բանկում գործող «Ցպահանջ» ավանդի համար սահմանված տարեկան տոկոսադրույքով
3-ից (ներառյալ) մինչև 6 ամիս	պայմանագրով սահմանված տոկոսադրույք «-2.5%»-ով***
6-ից (ներառյալ) մինչև 12 ամիս	պայմանագրով սահմանված տոկոսադրույք «-1.5%»-ով***
12 ամիս (ներառյալ) մինչև 24 ամիս	պայմանագրով սահմանված տոկոսադրույք «-0.5%»-ով***
24 ամիս (ներառյալ) և ավելի	Կիրառվում է պայմանագրով սահմանված տոկոսադրույքը***

** Երկարաձգված ավանդների դեպքում սկսած պայմանագրի երկարաձգման պահից

*** սակայն ոչ պակաս քան «Ցպահանջ» ավանդի համար սահմանված տարեկան տոկոսադրույքով

Ավանդի ներդրման համար անհրաժեշտ գումարի նվազագույն չափը՝

- ԶՂ դրամով ավանդի ներդրման դեպքում՝ 100,000 ԶՂ դրամ,
- ԱՄՆ դոլարով ավանդի ներդրման դեպքում՝ 200 ԱՄՆ դոլար,
- Եվրոյով ավանդի ներդրման դեպքում՝ 200 Եվրո,
- Ռուբլով ավանդի ներդրման դեպքում՝ 10,000 Ռուբլի:

Մինևույն հաճախորդի/հաճախորդների խմբի գծով համախառն 200,000,000 ԶՂ դրամը և/կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող յուրաքանչյուր ավանդի ընդունման, ինչպես նաև դրա տոկոսադրույքը և այլ պայմանները որոշվում են անհատական՝ Բանկի կողմից:

ԱՎԱՆԴ «ՑՊԱՀԱՆՋ»

Ժամկետ	անժամկետ
ԶՂ դրամ/ԱՄՆ դոլար/Եվրո/Ռուբլի	0.1%
<p>«Ցպահանջ» ավանդի ներդրման պայմանները հետևյալն են.</p> <ul style="list-style-type: none"> • «Ցպահանջ» ավանդի տոկոսագումարները չեն կապիտալացվում: • Ավանդատուն իրավունք ունի ավանդային պայմանագրի գործողության ընթացքում համալրել և նվազեցնել ավանդային հաշիվը: • «Ցպահանջ» ավանդի գծով կուտակված տոկոսագումարները վճարվում են կիսամյակային հաճախականությամբ: • «Ցպահանջ» ավանդի ներդրման համար անհրաժեշտ գումարի նվազագույն չափ չի սահմանվում: • «Ցպահանջ» ավանդային հաշվին փոխանցված (անկանխիկ մուտքագրված) միջոցների կանխիկացման դեպքում գանձվում է կանխիկացման սակագին՝ համաձայն «Ինտեկրանկ» ՓԲԸ Տնօրինության կողմից հաստատված «03-ԼԻ-21 Բանկային հաշվի "Ստանդարտ" սակագնային պլան ֆիզիկական անձանց համար» փաստաթղթի: • «Ցպահանջ» ավանդի տոկոսադրույքը Բանկի կողմից կարող է վերանայվել՝ կապված շուկայական տոկոսադրույքների փոփոխությունների հետ: Տոկոսադրույքի փոփոխման հետևանքով մինչ այդ վճարված կամ կուտակված տոկոսագումարները չեն վերահաշվարկվում: 	

- Մինևույն հաճախորդի/հաճախորդների խմբի գծով համախառն 200,000,000 ՀՀ դրամը և/կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող յուրաքանչյուր ավանդի ընդունման, ինչպես նաև դրա տոկոսադրույքը և այլ պայմանները որոշվում են անհատական՝ Բանկի կողմից:

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՊԼԱՆ

Հաճախորդի խումբ	Բանկում ընթացիկ հաշիվ ունեցող ֆիզիկական անձինք			
Խնայողական պլանի արժույթ	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար			
Խնայողական պլանի բացման և սպասարկման վճար	Անվճար			
Խնայողական պլանի բացման նվազագույն գումար	50,000 ՀՀ դրամ, 100 ԱՄՆ դոլար			
Խնայողական պլանով նախատեսված գործառնություններ	<u>Համալրում՝</u>			
	❖ Թույլատրվում է իրականացնել անսահմանափակ քանակի և գումարի համալրումներ			
Խնայողական պլանով նախատեսված գործառնություններ	<u>Ելքագրում՝</u>			
	❖ Խնայողական պլանի գումարը պայմանագրային ժամկետից շուտ ամբողջությամբ կամ մասնակի ետ պահանջելու դեպքում կուտակված/վճարված տոկոսագումարի նկատմամբ կկատարվի վերահաշվարկ՝ տվյալ պահին Բանկում “Ցպահանջ” ավանդի համար սահմանված տարեկան տոկոսադրույքով			
Ժամկետ (ամիս)	6-8	9-11	12-14	15-24
Տարեկան անվանական տոկոսադրույք	ՀՀ դրամ	6.50%	7.00%	7.65%
	ԱՄՆ դոլար	1.80%	2.25%	2.50%
Տոկոսների վճարումը ¹	Ժամկետի ավարտին			

Այլ պայմաններ

1. «Մանկական ավանդ» ավանդատեսակի համար տոկոսադրույքը սահմանվում է «Պարզ» ավանդին հավասար՝ միայն գործող «Մանկական ավանդ» ավանդների վերաձևակերպման և երկարաձգման համար:
2. Ծառայությունների մասին ամբողջական տեղեկատվությանը կարելի է ծանոթանալ բանկի պաշտոնական կայքում՝ www.incobank.am:

¹ Ըստ ՀՀ Զաղաքացիական օրենսգրքի 907 հոդվածի 1-ին կետի, ավանդի վերադարձման կամ ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրերին ավանդի գումարի նկատմամբ տոկոսագումար չի հաշվարկվում:

Ավանդային պայմանագրով վճարվող տոկոսագումարների հաշվարկման օրինակներ*

1. Ավանդ «Պարզ»

Ավանդի գումար՝ 1,000,000 ՀՀ դրամ
Ավանդի ժամկետ՝ 12 ամիս (365 օր)
Տարեկան պարզ տոկոսադրույք՝ 9.00%
Տոկոսագումարների վճարումը՝ ժամկետի վերջում
Հարկում՝ 10% եկամտից

Տոկոսագումարի հաշվարկ՝

$$\frac{1,000,000 \text{ ՀՀ դրամ} * 9.00\% * 365 \text{ (օր)}}{365} - 10\% \text{ եկամտային հարկ} = 81,000$$

Ընդամենը տոկոսագումար՝ 81,000 ՀՀ դրամ
Տարեկան տոկոսային եկամտաբերությունը կկազմի 9.00%:

2. Ավանդ «Համալրվող»

Ավանդի գումար՝ 1,000,000 ՀՀ դրամ
Ավանդի ժամկետ՝ 12 ամիս (365 օր)
Տարեկան պարզ տոկոսադրույք՝ 8.40%
Ավանդի համալրվել է 90-րդ օրը 500,000 ՀՀ դրամով
Տոկոսագումարների վճարումը՝ ժամկետի վերջում
Հարկում՝ 10% եկամտից
Համալրման հնարավորությամբ ամիսների քանակ՝ $12 \text{ (ամիս)} * 1/3 = 4 \text{ ամիս}$

Տոկոսագումարի հաշվարկ՝

$$\frac{1,000,000 \text{ ՀՀ դրամ} * 8.40\% * 365 \text{ (օր)}}{365} - 10\% \text{ եկամտային հարկ} = 75,600$$

$$\frac{500,000 \text{ ՀՀ դրամ} * 8.40\% * 276 \text{ (օր)}}{365} - 10\% \text{ եկամտային հարկ} = 28,583$$

Ընդամենը տոկոսագումար՝ $75,600 + 28,583 = 104,183$ ՀՀ դրամ
Տարեկան տոկոսային եկամտաբերությունը կկազմի 8.40 %:

3. Ավանդ «Ճկուն»

Ավանդի գումար՝ 1,000,000 ՀՀ դրամ
Ավանդի ժամկետ՝ 12 ամիս (365 օր)
Տարեկան պարզ տոկոսադրույք՝ 7.90%
Տոկոսագումարների վճարումը՝ ժամկետի վերջում
Հարկում՝ 10% եկամտից
Ավանդը ամբողջությամբ խզվել է 130-րդ օրը (5-րդ ամսում)

Տոկոսագումարի հաշվարկ`

$$\frac{1,000,000 \text{ ՀՀ դրամ} * (7.90\% - 2.50\%) * 129 \text{ (օր)}}{365} - 10\% \text{ եկամտային հարկ} = 17,176 \text{ ՀՀ դրամ}$$

Ընդամենը տոկոսագումար` 17,176 ՀՀ դրամ

Տարեկան տոկոսային եկամտաբերությունը կհամընկնի խզման տարեկան տոկոսադրույքի հետ, այս դեպքում` 5.40%:

4. Ավանդ «Ցպահանջ»

Ավանդի գումար` 1,000,000 ՀՀ դրամ

Ավանդի ժամկետ` 12 ամիս (365 օր)

Տարեկան պարզ տոկոսադրույք` 0.1%

Տոկոսագումարների վճարումը` կիսամյակային

Հարկում` 10% եկամտից

Տոկոսագումարի հաշվարկ`

$$\frac{1,000,000 \text{ ՀՀ դրամ} * 0.1\% * 365 \text{ (օր)}}{365} - 10\% \text{ եկամտային հարկ} = 900 \text{ ՀՀ դրամ}$$

Ընդամենը տոկոսագումար` 900 ՀՀ դրամ

Տարեկան տոկոսային եկամտաբերությունը կկազմի 0.1%:

* Ըստ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 907 հոդվածի 1-ին կետի, վերադարձման կամ ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրերին ավանդի գումարի նկատմամբ տոկոսագումար չի հաշվարկվում:

Բանկային ավանդների սպասարկման հիմնական պայմաններ

1. «Բանկային ավանդի ծառայության սակագներ ֆիզիկական անձանց համար» և հնեկորբանկ ՓԲԸ Տնօրինության կողմից հաստատված «Բանկային սպասարկման հիմնական պայմաններ» փաստաթղթերը, (այսուհետ` Հիմնական պայմաններ) միասին հանդիսանում են «Բանկային ավանդի ներդրման դիմում/պայմանագիր (ֆիզիկական անձ հաճախորդների համար)» փաստաթղթի անբաժանելի մասը: Սույն ամփոփագրում օգտագործվող հասկացություններն ունեն նույն իմաստը, ինչ Հիմնական պայմաններում:
2. Ավանդի ներդրման համար Հաճախորդի կողմից ներկայացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված անձը հաստատող փաստաթուղթ, իսկ ոչ հաշվետեր Հաճախորդների կողմից ներկայացվում են նաև «Հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ» (տեղադրված է Բանկի պաշտոնական էջում` www.inecobank.am) փաստաթղթով սահմանված այլ փաստաթղթեր:
3. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով Բանկը կարող է Հաճախորդից «ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ սպառողին (նման պահանջի առկայության դեպքում):

4. Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Բանկը Հաճախորդի՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:
5. Ավանդն ընդունելիս այն մուտքագրվում է այդ նպատակով բացված ավանդային հաշվին (այսուհետ՝ Ավանդային հաշիվ): Ավանդային հաշիվները վարվում են ընթացիկ և այլ բանկային հաշիվներից առանձին և դրանց նկատմամբ տարածվում են Հաշիվների վերաբերյալ Հիմնական պայմանների դրույթները:
6. Համալրման հնարավորությամբ Ավանդային հաշվին Հաճախորդի անունով կարող են մուտքագրվել նաև երրորդ անձանցից ստացված դրամական միջոցները՝ նրա Ավանդային հաշվի հաշվեհամարի նշումով, եթե այլ բան սահմանված չէ Բանկի կողմից:
7. Ավանդները կարող են ներդրվել Ավանդի պայմանագրում նշված երրորդ անձանց անունով՝ այդ անձանց Բանկի կողմից բավարար համարվող եղանակով նախապես նույնականացնելու պայմանով: Բանկը կարող է հրաժարվել հոգուտ երրորդ անձանց Ավանդի պայմանագրեր կնքելուց, եթե հիմքեր կան կասկածելու գործարքի օրինականության վերաբերյալ, կամ հնարավոր չէ պատշաճ կարգով նույնականացնել երրորդ անձանց: Նման երրորդ անձը Հաճախորդի իրավունքներ ձեռք է բերում Բանկին այդ իրավունքների վրա հիմնված առաջին իսկ պահանջը ներկայացնելու կամ այդ իրավունքներից օգտվելու իր մտադրության վերաբերյալ որևէ այլ եղանակով Բանկին տեղեկացնելու պահից, եթե այլ բան նախատեսված չէ Ավանդի պայմանագրով:
8. Բանկը Հաճախորդին ավանդի դիմաց տոկոսներ է վճարում Սակագներով և տվյալ ավանդի պայմաններով նախատեսված կարգով և չափով: Սակագներով սահմանված տոկոսը հաշվարկվում և վճարվում է ՀՀ դրամով՝ Բանկի կողմից որոշված փոխարժեքով կամ ավանդատուի ցանկությամբ այն արտարժույթով, որով ներգրավվել է ավանդը:
9. Բանկային ավանդի գումարի վրա տոկոսները հաշվարկվում են ավանդը բանկ մուտք լինելու օրվանից մինչև այն ավանդատուին վերադարձնելու կամ ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրն ընկած ժամանակահատվածի օրացուցային օրերի համար:
10. Տոկոսները հաշվարկվում են Ավանդային հաշվում առկա ամբողջ գումարի նկատմամբ, Ավանդի պայմանագրի ողջ ժամկետի համար՝ օրական կտրվածքով: Բանկը յուրաքանչյուր օրվա տոկոսադրույքը հաշվարկում է սահմանված տոկոսադրույքի 1/365 հարաբերակցությամբ:
11. Ավանդի պայմանագրով որոշված այն ավանդի համար տոկոսների չափը, որը ֆիզիկական անձ Հաճախորդը ներդրել է որոշակի ժամկետի ավարտից կամ պայմանագրով նախատեսված հանգամանքները վրա հասնելուց հետո այն հետ ստանալու պայմանով, Բանկը չի կարող միակողմանիորեն նվազեցնել, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով: Օրենքով չարգելված դեպքերում Բանկն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխել ավանդի նկատմամբ հաշվարկվող տոկոսադրույքը՝ այդ մասին համաձայնեցված եղանակով ծանուցելով Հաճախորդին: Տոկոսադրույքի փոփոխության հետ համաձայն չլինելու դեպքում Հաճախորդն իրավունք ունի նախքան փոփոխված տոկոսադրույքի ուժի մեջ մտնելը պահանջել վերադարձնել ավանդը և վճարել վերադարձման պահի դրությամբ ավանդի դիմաց սահմանված չափով հաշվարկված տոկոսները:
12. Ավանդին հաշվեգրված տոկոսը Հաճախորդին վճարելիս Բանկը հանդես է գալիս որպես ֆիզիկական անձ Հաճախորդի հարկային գործակալ՝ օրենքով սահմանված չափով և կարգով գանձելով և պետական բյուջե փոխանցելով սահմանված հարկերը: Բանկը պարտավոր չէ ավանդի գումարը ժամկետից շուտ պահանջելու և նման այլ դեպքերում ետ ստանալ Հաճախորդից ավել գանձված հարկերի գումարը կամ այն վերադարձնել Հաճախորդին:
13. Ավանդի ժամկետը լրանալու օրը ավանդի վերադարձման պահանջ չներկայացնելու դեպքում ավանդի ժամկետը կարող է երկարաձգվել տվյալ պահին նույն տեսակի ավանդների համար Բանկում գործող պայմաններով՝ ավանդին գումարելով (կամ առանց գումարելու) տվյալ պահին հաշվարկված և չվճարված տոկոսները (ավանդի արժույթից տարբեր արժույթի դեպքում փոխարկելով ավանդի արժույթին՝ այդ պահին Բանկի կողմից որոշված փոխարժեքով): Եթե ավանդի ժամկետը լրանալու օրը Բանկը նույն տեսակի ավանդ այլևս չի առաջարկում,

ապա ավանդի ժամկետը սույն կետին համապատասխան կարող է երկարաձգվել Բանկի կողմից սահմանված այլ ավանդի պայմաններին համապատասխան:

14. Հաճախորդն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծել Ավանդի պայմանագիրը (ավանդը կամ դրա մի մասը Ավանդի պայմանագրում սահմանված ժամկետից շուտ պահանջել):
15. Բանկն իրավունք ունի միակողմանիորեն լուծել Ավանդի պայմանագիրը՝ այդ մասին համաձայնեցված եղանակով ծանուցելով Հաճախորդին՝ վերջինիս վերադարձնելով ավանդը և վճարելով վերադարձման պահի դրությամբ հաշվարկված և չվճարված տոկոսները:
16. Ավանդի պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել ՀՀ օրենսդրության համաձայն իրավասու մարմինների պահանջով ավանդի գումարի վրա բռնագանձում տարածելու կամ այլ կերպ ավանդի գումարն Ավանդային հաշվից ելքագրելու Բանկի համար պարտադիր պահանջ ստացվելու դեպքերում:
17. Ավանդի պայմանագրի դադարման դեպքում Ավանդային հաշվին առկա միջոցները փոխանցվում են Հաճախորդի ընթացիկ հաշվին, իսկ հօգուտ երրորդ անձի բացված ավանդների դեպքում՝ վերջինիս ընթացիկ հաշվին, եթե երրորդ անձը նախքան Ավանդի պայմանագրի դադարումն արտահայտել է Հաճախորդի (որպես ավանդատու) իրավունքներից օգտվելու իր մտադրությունը, եթե այլ բան համաձայնեցված չէ Հաճախորդի և Բանկի միջև կամ սահմանված չէ Բանկի կողմից:

Ավանդատուի արտոնություններ

1. Բանկում ժամկետային ավանդ ներդնելու դեպքում ընթացիկ հաշիվների բացումը անվճար է: Ավանդի ձևակերպումից հետո մինչև 30 օրվա ընթացքում ավանդային պայմանագրի վաղաժամկետ դադարման (լրիվ կամ մասնակի) դեպքում Բանկը Հաճախորդից կարող է գանձել «Բանկային հաշվի ստանդարտ սակագնային պլան ֆիզիկական անձանց համար» կամ «Բանկային հաշվի ընթացիկ սակագնային պլան ֆիզիկական անձանց համար» համապատասխան սակագներով սահմանված հաշվի բացման և/կամ դրամական միջոցների կանխիկացման և /կամ հաշվին կանխիկ մուտքագրման սակագինը: Բանկը կարող է իրականացնել տոկոսների վերահաշվարկ, ինչը կարող է հանգեցնել տարեկան տոկոսային եկամտաբերության նվազման:
2. **Ստանդարտ** սակագնային պլանի շրջանակներում Հաճախորդին քարտի գործողության ողջ ժամկետի համար **անվճար** տրամադրվում է՝
 - հաճախորդի նախընտրած արժույթով մեկ ArCa Classic քարտ, եթե հաճախորդի ժամկետային ավանդների ընդհանուր գումարային մեծությունը քարտի պատվիրման պահին կազմել է մինչև 500,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ,
 - հաճախորդի նախընտրած արժույթով Classic կամ Standart դասի մեկ քարտ, եթե հաճախորդի ժամկետային ավանդների ընդհանուր գումարային մեծությունը քարտի պատվիրման պահին կազմել է 500,001-10,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ,
 - հաճախորդի նախընտրած արժույթով Gold դասի մեկ քարտ (առանց աջակցության ապահովագրության), եթե հաճախորդի ժամկետային ավանդների ընդհանուր գումարային մեծությունը քարտի պատվիրման պահին կազմել է առնվազն 10,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ:

Ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկը

Ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերությունը հաշվարկվում է՝ ելնելով հետևյալ բանաձևից՝

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1+APY)^{\frac{Dn}{365}}}$$

Որտեղ՝

1. A - ավանդի սկզբնական գումարն է:
2. n - ավանդի դիմաց դրամական հոսքերի հերթական համարն է:
3. N - ավանդի դիմաց դրամական հոսքերի վերջին համարն է (ներառյալ նաև ավանդի ներդրման պահին դրամական հոսքը), որից հետո ավանդային պայմանագրի ժամկետը համարվում է ավարտված:
4. K_n -ավանդի ներդրման պահին և/կամ ավանդի գործողության ընթացքում ներդրված ավանդի և/կամ կապիտալացված տոկոսագումարների, առկայության դեպքում պարտադիր վճարների հոսքեր:
5. D_n - այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել ավանդի ներդրման օրից մինչև ավանդի դիմաց կատարվող հերթական՝ n-րդ դրամական հոսքերը ներառյալ: Այն դեպքում, երբ ավանդի ներդրման պահին է դրամական հոսքերը, $D_1 = 0$:

Բանկային ծառայությունների մատուցումը հեռակառավարման համակարգերի միջոցով

1. Բանկն առաջարկում է ԻնտեկտՕնլայն, ԻնտեկտՄոբայլ և այլ Յամակարգեր՝ ինտերնետով, հեռախոսազանգի կամ SMS հաղորդագրության և կապի այլ միջոցներով բանկային ծառայություններից օգտվելու, ինչպես նաև տեղեկություններ ստանալու հնարավորություն՝ առանց Բանկ այցելելու: Յամակարգերը ժամանակակից և հարմարավետ գործիքներ են, որոնք հնարավորություն են ընձեռում դիտել Յաշիվներով կատարվող գործառնությունները, ներկայացնել վճարման հանձնարարականներ, ստանալ տեղեկություններ, կատարել արտարժույթի փոխանակում, վճարումներ, ներկայացնել և ստանալ (ակցեպտավորել) դիմումներ, հայտեր, առաջարկներ (օֆերտաներ), կնքել պայմանագրեր և այլ գործարքներ, ինչպես նաև իրականացնել տվյալ Յամակարգում Բանկի կողմից մատչելի դարձված ֆինանսական և այլ գործառնություններ: Յամակարգերի տեսակները, դրանց օգտագործման պայմանները և կանոնները հրապարակվում են Կայքում կամ համապատասխան Յամակարգից օգտվելու համար սահմանված այլ կայքերում, ծրագրային ապահովման միջոցներում և բջջային հավելվածներում և կարող են ժամանակ առ ժամանակ փոփոխվել:
2. Յամակարգերը հասանելի են Բանկում համապատասխան հաշիվներ ունեցող Յաճախորդների համար: Յաճախորդին համապատասխան Յամակարգից օգտվելու սարքի, օգտագործողի անվան, գաղտնաբառի, ինչպես նաև Յաճախորդին համակարգից օգտվելու հնարավորություն այլ կերպ ընձեռելը նշանակում է, որ Յաճախորդի և Բանկի միջև կնքվել է Յամակարգի տրամադրման պայմանագիր՝ Յիմնական պայմաններին համապատասխան: Յամակարգի տրամադրման պայմանագրի անբաժանելի մասն են Յիմնական պայմանները, Սակագները, համապատասխան Յամակարգի օգտագործման ուղեցույցները, Բանկի ինտերնետային կայքերի, բջջային հավելվածների և այլ ծրագրային ապահովման օգտագործման կանոնները և պայմանները, ինչպես նաև Յաճախորդի և Բանկի հարաբերությունները կարգավորող այլ փաստաթղթերը:
3. Կողմերն ընդունում են, որ Յամակարգ մուտք գործելու համար անհրաժեշտ օգտագործողի անվանման, գաղտնաբառերի, կամ այլ հաղորդագրությունների մուտքագրմամբ Բանկն իրականացնում է Յաճախորդի անհրաժեշտ և բավարար Նույնականացում, ինչը հիմք է Յամակարգերի միջոցով Յաճախորդին բանկային ծառայություններ մատուցելու համար:
4. Կողմերն ընդունում են, որ Յաճախորդին Նույնականացնելուց հետո Յամակարգ մուտք գործելու համար Յաճախորդի կողմից օգտագործվող գաղտնաբառն ունի թղթային կրիչի վրա դրված բնօրինակ ստորագրությանը համարժեք իրավաբանական ուժ: Յաճախորդի կողմից

Համակարգ մուտք գործելուց հետո Համակարգի միջոցով Բանկ ներկայացվող բոլոր հայտերը, դիմումները, պայմանագրերն ու այլ էլեկտրոնային փաստաթղթերը համարվում են ստորագրված Հաճախորդի կողմից: ԻնտեկտՕնլայն Համակարգի միջոցով տեղեկատվություն փոխանակելը հավասարազոր է Բանկի տարածքում առձեռն փոխանակելուն:

5. Հաճախորդը պարտավոր է խստիվ պահպանել Համակարգ մուտք գործելու գաղտնաբառի և այլ նույնականացնող տվյալների գաղտնիությունը և անհրաժեշտ շրջահայացություն ցուցաբերել Համակարգերն օգտագործելիս այլ անձանց կողմից Համակարգ ապօրինի մուտքի հնարավորությունը և տվյալների հասանելիությունը բացառելու համար: Բանկը պատասխանատվություն չի կրում դրանք երրորդ անձանց բացահայտվելու արդյունքում Հաճախորդին պատճառված վնասների համար:
6. ԻնտեկտՕնլայն, ԻնտեկտՄոբայլ և այլ Համակարգերից օգտվելու համար Բանկը կարող է տրամադրել ծրագրային ապահովում, անվտանգության բանալիներ, չիպեր, թղթեններ և Համակարգ մուտք գործելու անվտանգությունն ապահովող այլ սարքեր: Այդ սարքերը համարվում են Բանկի սեփականությունը և ենթակա են օգտագործման Բանկի սահմանած կարգով: Սարքի կորստի կամ փչացման դեպքում Հաճախորդը պարտավոր է անհապաղ տեղեկացնել Բանկին: Բանկը կարող է պահանջել անհապաղ հետ վերադարձնել Հաճախորդին տրամադրված սարքերը, փոխարինել դրանք, ինչպես նաև սահմանել դրանց օգտագործման հատուկ կարգ և պայմաններ:
7. Բանկն օգտագործում է Համակարգերով տվյալների փոխանցման անվտանգությունն ապահովող ժամանակակից և հուսալի միջոցներ: Այդուհանդերձ, Հաճախորդը Համակարգերն օգտագործում է իր ռիսկով և Բանկը պատասխանատվություն չի կրում Համակարգերի օգտագործման հետ կապված խափանումների, տվյալների կորուստների, ինչպես նաև Համակարգերի օգտագործումից բխող Հաճախորդների տվյալների բացահայտման և Հաճախորդների ցանկացած այլ կորուստների և վնասների համար:
8. Համակարգերը տրամադրվում են դրանց հասանելիության պահին գործող պայմաններով և հնարավորություն են տալիս օգտվել փաստացի այդ պահին մատչելի գործառնություններից: Հաճախորդը տեղյակ է, որ կախված Վճարային համակարգերի կանոններից և տեխնիկական հնարավորություններից, Քարտային և այլ հաշիվների, ինչպես նաև այլ գործառնությունների վերաբերյալ որոշ տեղեկություններ կարող են Համակարգում արտացոլվել կամ թարմացվել հետագայում: Հաճախորդներին առաջարկվող ծառայությունների ցանկն ու առանձին հնարավորությունները կարող են սահմանափակվել կախված Հաճախորդի համակարգչի կամ այլ տեխնիկական միջոցների հնարավորություններից, կապի որակից, Բանկի կողմից իրականացվող տեխնիկական սպասարկման աշխատանքներից և այլ գործոններից: Բանկը կարող է ավելացնել կամ պակասեցնել Համակարգերով մատուցվող գործառնությունների շրջանակը, ինչպես նաև դադարեցնել կամ կասեցնել Համակարգի մատչելիությունը, (ներառյալ՝ լուծել Համակարգի տրամադրման պայմանագիրը)՝ տեխնիկական սպասարկման աշխատանքներ իրականացնելու կամ այլ պատճառներով:
9. Համակարգերի միջոցով Հաճախորդի ներկայացրած հայտերի ուսումնասիրման արդյունքների, ինչպես նաև Հաճախորդի այլ գործառնությունների մասին Բանկը կարող է տեղեկացնել էլեկտրոնային եղանակով, ներառյալ՝ Համակարգը սպասարկող ինտերնետային էջերի կամ բջջային հավելվածների համապատասխան մասում տեղեկություններ տեղադրելով, էլեկտրոնային փոստով, բջջային հեռախոսահամարին ուղարկված կարճ հաղորդագրությունների (SMS), Համակարգի բջջային հավելվածների կողմից ուղարկվող հաղորդագրությունների (Push Notifications) միջոցով և այլ եղանակներով: Համակարգի միջոցով կատարված գործառնությունների մասին տվյալները պահպանվում են Բանկի սերվերներում և համարվում են ապացույց՝ վիճելի հարցերի կարգավորման համար:
10. Բանկն իրավունք ունի Համակարգի միջոցով կատարվող գործառնությունների համար նախատեսել սահմանաչափեր, ինչպես նաև Հաճախորդի հանձնարարականներն ու ցուցումները կատարելիս իրականացնել Հաճախորդի ինքնության հավելյալ ստուգում՝ պահանջելով լրացուցիչ ձայնային կամ այլ հաստատում: Բանկը կարող է կասեցնել կամ դադարեցնել Համակարգ մուտք գործելու Հաճախորդի հնարավորությունը՝ Սակագներով և այլ փաստաթղթերով նախատեսված վճարները չկատարելու, սույն Հիմնական պայմանների պահանջները խախտելու, ինչպես նաև Հաճախորդի նույնականության վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքերում:
11. Համակարգի տրամադրման պայմանագրի լուծումը չի հանգեցնում Բանկի և Հաճախորդի միջև առկա այլ պայմանագրային հարաբերությունների փոփոխմանը կամ դադարեցմանը, եթե գրավոր ձևով այլ բան համաձայնեցված չէ:

ԾԱՆՈՒՑՈՒՄ ԱՎԱՆՂՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ԴԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Սույն ծանուցման բոլոր սահմանումները համապատասխանում են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) սահմանումներին:

Հատուցման դեպքը

Ձեր երաշխավորված ավանդը ենթակա է հատուցման հետևյալ դեպքերում.

1. Եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը ճանաչվում է անվճարունակ և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) խորհրդի որոշմամբ հաստատվում է բանկի կողմից օրենքով և պայմանագրերով սահմանված ժամկետներում ավանդները վերադարձնելն ի վիճակի չլինելու փաստը կամ

2. Եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը սնանկ է ճանաչվում (այսուհետ՝ անվճարունակ բանկ):

Երաշխավորված ավանդի առավելագույն չափը և հաշվարկման կարգը

Երաշխավորված ավանդների հաշվարկման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի օգոստոսի 26-ի թիվ 261-Ն որոշմամբ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ դրամային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների, և Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժույթային ավանդները համարվում են մեկ արտարժույթային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների:

Ավանդների երաշխավորվող սահմանաչափերը հետևյալն են՝

Ավանդի արժույթային կառուցվածքը	Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	Եթե նույն բանկում միայն արտարժույթային ավանդ	Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ	
			Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից ավելի է	Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից պակաս է
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	16 միլիոն ՀՀ դրամ	7 միլիոն ՀՀ դրամ	16 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)	7 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային ավանդը՝ 7 միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով)

- Եթե Դուք անվճարունակ բանկում ունեք առանձին բանկային ավանդ և միևնույն ժամանակ նույն բանկում ներդրված համատեղ բանկային ավանդի սեփականատեր եք, ապա երաշխավորվում է Ձեր առանձին բանկային ավանդի և համատեղ բանկային ավանդում Ձեր մասնաբաժնի հանրագումարը՝ Օրենքով սահմանված կարգով և չափով:
- Եթե դուք անվճարունակ բանկի նկատմամբ ունեք պարտավորություն, ապա հատուցման ենթակա գումարը կհաշվարկվի Ձեր բանկային ավանդի և պարտավորության դրական տարբերության հիման վրա՝ Օրենքով սահմանված կարգով և չափով:
- Երկու կամ ավելի ավանդատուների համատեղ բանկային ավանդը համարվում է յուրաքանչյուր անձի առանձին բանկային ավանդ, ավանդատուի՝ պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով: Եթե պայմանագրով սահմանված չեն համատեղ բանկային ավանդի ավանդատուների մասնաբաժինները, ապա համատեղ բանկային ավանդն ավանդատուների միջև բաժանվում է հավասարաչափ:
- Բանկային ավանդի հատուցումը կատարվում է միայն հայկական դրամով: Արտարժութային բանկային ավանդի դրամական համարժեքությունը որոշվում է հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ Կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:
- Ձեր բանկային ավանդը չի հատուցվում, եթե հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ այդ ավանդը պակաս է 1000 հայկական դրամից:

Չերաշխավորված բանկային ավանդ

Ձեր բանկային ավանդը երաշխավորված չէ, եթե՝

- ա) Դուք հանդիսանում եք տվյալ բանկի ղեկավար և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,
 - բ) Դուք հանդիսանում եք տվյալ բանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձ և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,
 - գ) Դուք, որպես ավանդի սեփականատեր (համասեփականատեր), հրաժարվել եք ավանդի՝ Ձեր մասի նկատմամբ սեփականության իրավունքից,
 - դ) Ձեր ավանդն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ճանաչվել է հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոց, քանի դեռ Դուք հակառակը չեք ապացուցել,
 - ե) Ձեր ավանդը տվյալ բանկում ներդրվել է բանկային ավանդի ներդրման պահին տվյալ բանկի կողմից հրապարակային պայմանագիր կնքելու առաջարկով նախատեսված նմանատիպ բանկային ավանդներիտոկոսադրույքն առնվազն 1,5 անգամ գերազանցող տոկոսադրույքով,
 - զ) Ձեր ավանդը ներդրված է բանկի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղերում:
- ԲԱՑԻ ԱՅԴ, ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ՁԵՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԵՏԱԴԱԿԱՆ ՀԱՇԻՎՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ՄԻՋՈՑՆԵՐԸ:

Երաշխավորված ավանդների հատուցման կարգը և ժամկետները

Հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում Հիմնադրամը հայտարարություն է հրապարակում հատուցման դեպքի մասին: Հատուցման դեպքի օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրվանից սկսած Հիմնադրամը, անվճարունակ բանկի կամ այլ բանկի միջոցով, սկսում է իրականացնել Ձեր ավանդների հատուցման գործընթացը: Դուք կարող եք գրավոր կամ էլեկտրոնային եղանակով պահանջ ներկայացնել ոչ ուշ, քան հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք տարվա ընթացքում: Նշված ժամկետում Ձեր կողմից գրավոր պահանջ չներկայացնելու դեպքում Հիմնադրամի կողմից Ձեր երաշխավորված ավանդի հատուցում չի իրականացվի: Հիմնադրամը պարտավոր է իրականացնել ավանդատուների պահանջներով հատուցումները՝ գրավոր կամ էլեկտրոնային եղանակով պահանջը ներկայացնելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:

Երաշխավորված ավանդի գումարի հատուցումից հետո անվճարունակ բանկի հանդեպ Ձեր ունեցած դրամական պահանջը՝ հատուցված գումարի չափով համարվում է բավարարված: Հատուցման չափը գերազանցող գումարը համարվում է անվճարունակ բանկի պարտավորությունը Ձեր նկատմամբ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Ձեր ավանդի հատուցումն առավել սահուն իրականացնելու նպատակով առաջարկում ենք ավանդի ներդրման ժամանակ Ձեր կողմից բանկին տրամադրված տվյալների (անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, սոցիալական ապահովության քարտի տվյալներ, հասցե, հեռախոսահամար և այլն) ցանկացած փոփոխության դեպքում այդ մասին անմիջապես տեղեկացնել բանկին:

Ավանդային պայմանագրից բխող վեճերի լուծման կարգ

1. Ավանդային պայմանագրի գործողության ընթացքում կողմերի միջև ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնության չգալու դեպքում վեճը լուծվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
2. Հաճախորդը բողոքը (բացառությամբ՝ բողոք-պահանջի) և դիմումը կարող է Բանկին ներկայացնել առձեռն (հանձնելով գրությունը Բանկի գործունեության վայրում), փոստով (ուղարկելով Բանկի գլխամասային գրասենյակի փոստային հասցեով), Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրված բողոքարկման հայտի միջոցով, հեռախոսով (զանգահարելով Բանկի Կոնտակտային կենտրոն) կամ Բանկի այլ հեռահար հաղորդակցման ուղիներով (Էլեկտրոնային փոստով, Ինտեր Օնլայն/Մոբայլ համակարգերով, սոցիալական ցանցերի միջոցով և այլն): Բողոք-պահանջը Բանկին ներկայացվում է գրավոր՝ առձեռն, փոստով կամ Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրված բողոքարկման հայտով:
3. Բանկը բողոքի վերաբերյալ որոշում է կայացնում (բավարարել, մասնակի բավարարել, մերժել) 10 աշխատանքային օրվա ընթացքում:
4. Հաճախորդն իրավունք ունի Բանկի և իր միջև բխող բողոք-պահանջները ներկայացնել ֆինանսական համակարգի հաշտարարին:

Բանկի հետ հաղորդակցման եղանակ

ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ԻՆԵՎՈՒՄՆԿ ՓԲԸ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՍ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵժԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՅՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:

Հաշիվների քաղվածքների և տեղեկանքների տրամադրում

Ճառայություն	Սակագին
Հաշվի քաղվածքի տրամադրում Բանկում	Անվճար
Հաշվի քաղվածքի տրամադրում փոստով (ամսական)	🚩 ՀՀ տարածքում՝ անվճար

	❖ ԶՅ տարածքից դուրս՝ 2,000 ԶԶ դրամ + փոստային առաքման ծախսերը ²
Չաշվի քաղվածքի տրամադրում էլ. փոստով	Անվճար
Չաշվի քաղվածքի կրկնօրինակի տրամադրում	❖ մինչև 1 տարվա վաղեմության- 1.000 ԶԶ դրամ ❖ 1 տարուց ավել վաղեմության-3.000 ԶԶ դրամ
Տեղեկանքների և տեղեկատվության տրամադրում (մինչև 3 տարի վաղեմության)	Բանկային հաշվի վերաբերյալ և SWIFT հաղորդագրության պատճենի տրամադրում - 3,000 ԶԶ դրամ
	Գործարքների մանրամասների (այդ թվում արագ դրամական փոխանցումների համակարգերով) վերաբերյալ ³ - 3,000 ԶԶ դրամ
	Վարկերի և դրանց ապահովությունների վերաբերյալ ⁴ - 5,000 ԶԶ դրամ ⁵
	Եկամտային հարկի փոխհատուցում ստանալու նպատակով հիփոթեքային վարկի և հիփոթեքային վարկի ծրագրային համապատասխանության վերաբերյալ տեղեկանք - 1,000 ԶԶ դրամ
	Այլ տիպի և/կամ վաղեմության տեղեկանքների և տեղեկատվության տրամադրում- 10,000 ԶԶ դրամ

Ձեր ֆինանսական տեղեկատուն

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ «Ձեր ֆինանսական տեղեկատուն»՝ www.fininfo.am, ֆիզիկական անձանց առաջարկվող ծառայությունների որոնման, համեմատման և Ձեզ համար ամենաարդյունավետ տարբերակի ընտրությունը հեշտացնող էլեկտրոնային համակարգ է:

² Փոստային առաքումն իրականացվում է տեղական օպերատորի միջոցով, եթե հաճախորդի կողմից այլ հանձնարարական առկա չէ:

³ 10 գործարքից ավել տեղեկատվության համար կիրառվում է «Այլ տիպի» տեղեկանքների համար սահմանված սակագինը:

⁴ 2 և ավելի պայմանագրերի գծով տեղեկատվություն ներառելու դեպքում, կիրառվում է «Այլ տիպի» տեղեկանքների համար սահմանված սակագինը:

⁵ Համաձայնությունների սակագները կարգավորվում են համաձայն վարկավորման սակագների: